ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԵԼԼԻ ԱՐՄԵՆԻ

ԱՆՁԻ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2015

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АРАКЕЛЯН НЕЛЛИ АРМЕНОВНА

КОНСТИТУЦИОННО-ПРАВОВЫЕ ГАРАНТИИ ЗАЩИТЫ ДОСТОИНСТВА ЛИЧНОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 - «Публичное право-конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление»

ЕРЕВАН-2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գ. Գ. Հարությունյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Վ. Վ. Ստեփանյան**

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Է. Է. Շաթիրյան**

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ Պետական կառավարման ակադեմիա

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015թ. փետրվարի 23-ին, ժամը 14³⁰-ին ՀՀ ԲՈՀ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (Երևան-0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2014թ. հունվարի 22-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ **Վ.Դ. Ավետիսյան**

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юрид. наук, профессор **Г. Г. Арутюнян**

Официальные оппоненты: доктор юрид. наук, профессор **В. В. Степанян**

кандидат юрид. наук, доцент **Э. Э. Щатирян**

Ведущая организация: Академия государственного управления РА

Защита диссертации состоится 23-го февраля 2015 г. в 14³⁰ ч. на заседании Специализированного совета ВАК РА 001 по юриспруденции при Ереванском государственном университете (Ереван-0025, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников Ереванского государственного университета.

Автореферат разослан 22-го января 2015 г.

Ученый секретарь специализированного совета,
доктор юридических наук, доцент **В.Д. Аветисян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Անձի արժանապատվությունը ներկայացվում է որպես մարդու իրավական կարգավիճակի հիմքը, որը որոշում է իշխանության բոլոր ճյուղերի իրավասության բովանդակային սահմանները և իրացման հիմնական ուղիները: Չնայած արժանապատվությանը վերապահվող նման բարձր դերին, մասնագիտական գրականության մեջ չկա միանշանակ մոտեցում սույն եզրույթի ոչ բովանդակության, ոչ էլ կիրառման հնարավորության վերաբերյալ, իսկ հայրենական իրավական համակարգում առհասարակ բացակայում է արժանապատվության վերաբերյալ որևէ ամբողջական ուսումնասիրություն:

Իրավունքի գերակայության սկզբունքի ամրապնդմանը զուգընթաց «արժանապատվություն» եզրույթի իրավական բովանդակությունը և նորմատիվ գործառութային դերակատարությունը պատմական զարգացման ընթացքում ենթարկվել են որոշակի փոփոխությունների, և չնայած ՀՀ Սահմանադրությունը, ինչպես նաև ընթացիկ օրենսդրությունն ամրագրում են դրույթներ արժանապատվության առնչությամբ, ՀՀ իրավական համակարգում, այնուամենայնիվ, ոչ միանշանակ կերպով է ընկալվում արժանապատվության սահմանադրաիրավական կարգավիճակը, ինչն էլ պայմանավորում է արժանապատվության հստակ իրավական հայեցակարգի բացակայությունը: ՀՀ իրավական համակարգի շրջանակներում արժանապատվության առնչությամբ արմատավորված հայեցակարգային մոտեցումների արդյունքում առաջ է եկել եզրույթի հայեցակարգային շփոթ՝ պայմանավորված արժանապատվության բովանդակային և գործառութային հարթությունների տարրերի միախառնումով և ինքնին այդ հարթությունների թերի ներկայացմամբ և կանոնակարգմամբ: Արժանապատվության արդյունավետ պաշտպանությունը, առաջին հերթին, պահանջում է եզրույթի ամբողջական հայեցակարգի մշակում, ինչն էլ պայմանավորում է ատենախոսության արդիականությունը:

Մեր օրերում նկատվում են նաև «արժանապատվություն» եզրույթի ձևախեղման միտումներ, ինչի արդյունքում առաջ է եկել արժանապատվության բովանդակային սահմանների ուսումնասիրության անհրաժեշտությունը. մասնագիտական գրականության մեջ չի քննարկվել սույն հիմնահարցը, քանզի արժանապատվությունը միանշանակորեն ներկայացվել է որպես բացարձակ կատեգորիա, որը չի կարող սահմանափակվել:

Վերջին տարիներին ՀՀ իրավական համակարգում արժանապատվության իրավական պաշտպանության առումով կատարվել են որոշակի օրենսդրական փոփոխություններ, որոնք, ըստ էության, սահմանափակել են արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքների իրագործման հնարավորությունը: Բացի դրանից, արժանապատվության պաշտպանության որոշ սահմանադրաիրավական երաշխիքների իրացման հնարավորությունն օրենսդրական մակարդակում թերի է ապահովվում, ինչի արդյունքում դժվարանում է արժանապատվության ուղղակի իրավական պաշտպանության խնդրի լուծումը: «Մարդու արժանապատվության սահմանադրական կարգավիճակը» խորագրով 19-րդ երևանյան խորհրդաժողովի՝ իր բացման ելույթում Գ.

Հարությունյանը նշել է, որ «…առանց համարժեք իրավունքների ու դրանց իրացման երաշխիք հանդիսացող ազատությունների ճանաչման, երաշխավորման, ապահովման ու պաշտպանության մարդու արժանապատվության անքապտելի ու օբյեկտիվ որակները դրսևորվել չեն կարող»:

Վկայակոչված հիմնախնդիրների ուսումնասիրության անհրաժեշտությունը ևս վկայում է ատենախոսության թեմայի արդիականության մասին:

ՀՀ սահմանադրական դատարանն արժանապատվության պաշտպանության առնչությամբ ընդունել է մի քանի որոշումներ, որոնցում արտահայտված իրավական դիրքորոշումները կարող են հիմք հանդիսանալ արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքների նորովի ընկալման և նորովի կիրառման համար: Սահմանադրական դատարանի նշված որոշումներից ՍԴՈ-1121 որոշումն իր բնույթով կարող է համարվել հեղափոխական անձի արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքների իրացման տեսանկյունից: Այդ որոշման կատարման արդյունքում հայրենական իրավական համակարգում ընդունվել են խնդրո առարկա իրավահարաբերություններին նվիրված նոր օրենսդրական կանոնակարգումներ, որոնց ուսումնասիրությունը, սակայն, վկայում է, որ այդ փոփոխությունները ներդաշնակ չեն Սահմանադրական դատարանի վկայակոչված որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների տրամաբանությանը, ինչի արդյունքում նկատվում է այդ որոշումից բխող երաշխիքների թերի իրացման վտանգ: Նման իրավիճակը կարող է ավելի խորացնել արժանապատվության հայեցակարգային շփոթը ՀՀ-ում, իսկ արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքները կարող են վերածվել հռչակագրային և արհեստածին իրավական դրույթների:

Վերոգրյալ հիմնախնդիրների կարևորությամբ էր պայմանավորված 2014 թվականի հոկտեմբերի 23-25 Երևանում մարդու արժանապատվության սահմանադրական կարգավիճակի հիմնահարցերին նվիրված միջազգային խորհրդաժողովի կազմակերպումը ՀՀ սահմանադրական դատարանի և Վենետիկի հանձնաժողովի կողմից:

Այսպիսով, արժանապատվության գործառութային դերակատարության ուղղությունների զարգացումները, արժանապատվության բովանդակային սահմանների ձևախեղումները, հայրենական իրավական համակարգում արժանապատվության միասնական իրավական հայեցակարգի բացակայությունը, արժանապատվության սահմանադրական կարգավիճակի թերի ընկալումը, ՀՀ-ում ոլորտի զարգացման միտումներն առաջ են բերել բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնք պահանջում են համակարգված լուծումներ, ինչն էլ վկայում է ատենախոսության ընտրված թեմայի արդիականության մասին:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է հասարակական կյանքի զարգացմանը զուգընթաց անձի արժանապատվության բովանդակային փոփոխությունները, դրանցով պայմանավորված՝ արժանապատվության սահմանադրաիրավական կարգավիճակի դրսևորման նոր ձևերը և

արժանապատվության ուղղակի իրավական պաշտպանության ձևերն ուսումնասիրելու միջոցով բացահայտել հայրենական իրավական համակարգում արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական կառուցակարգերի առանձնահատկությունները և այդ առանձնահատկությունների տրամաբանության լույսի ներքո ՀՀ-ում արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքների իրացման առնչությամբ ծագող հիմնախնդիրների այնպիսի լուծումների առաջադրումը, որոնք կնպաստեն ՀՀ-ում սահմանադրական արժեբանության ոգուն համահունչ արժանապատվության պաշտպանության ապահովմանը: Ատենախոսության նպատակն է նաև անձի արժանապատվության հայրենական հայեցակարգի ուսումնասիրության միջոցով վերջինիս ներհայեցակարգային հակասությունները վերացնելու ուղղությամբ այնպիսի լուծումների առաջադրումը, որոնք կնպաստեն ՀՀ-ում անձի արժանապատվության միասնական և ներդաշնակ հայեցակարգի մշակմանը:

Ատենախոսության նպատակներին հասնելու համար առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել անձի արժանապատվության բովանդակությունը, բացահայտել հասարակական կյանքի զարգացմանը զուգընթաց ի հայտ եկած արժանապատվության բովանդակային փոփոխությունները, դրանցով պայմանավորված՝ արժանապատվության գործառութային դերակատարության առանձնահատկությունները ներկայիս իրավաընկալման պայմաններում,
- ուսումնասիրել արժանապատվության բովանդակային սահմանների հիմնահարցը,
- ուսումնասիրել արժանապատվության սահմանադրաիրավական կարգավիճակի դրսևորման եղանակներն արժանապատվության բովանդակային փոփոխությունների լույսի ներքո,
- ուսումնասիրել արժանապատվության պաշտպանության եղանակների հիմնական ուղղությունները թե՛ ՀՀ-ում, թե՛ օտարերկրյա պետություններում, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում,
- բացահայտել արժանապատվության պաշտպանության սահմանադրական կառուցակարգերի զարգացման արդի միտումները և նոր կառուցակարգերի ներդրման հիմնախնդիրները,
- բացահայտել արժանապատվության հայեցակարգի հիմնախնդիրները ՀՀ-ում և առաջարկել դրանց հաղթահարման ու միասնական հայեցակարգ մշակելու ուղղությամբ լուծումներ,
- բացահայտել անձի արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքների իրացման օրենսդրական հիմնախնդիրները ՀՀ-ում և առաջարկել դրանց հաղթահարման հնարավոր ուղիները:

Ատենախոսության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքը: Անձի արժանապատվության բովանդակության, դրա դրսևորման

եղանակների, կիրառության ձևերի վերաբերյալ ուսումնասիրություններն էապես սակավ են: Չնայած քննարկվող հարցադրումները որոշակիորեն ուսումնասիրվել են օտարերկրյա իրավագետների կողմից՝ միանշանակ մոտեցում խնդրո առարկա հիմնահարցերի առնչությամբ, այնուհանդերձ, չի ձևավորվել, իսկ արժանապատվության բովանդակային սահմանների հիմնահարցն ընդհանրապես չի քննարկվել մասնագիտական գրականության շրջանակներում: Քննարկվող հիմնահարցերին նվիրված ամբողջական ուսումնասիրություն հայրենական մասնագիտական գրականության մեջ առհասարակ առկա չէ: Հայրենական գրականության շրջանակներում ուսումնասիրվել են սույն հարցադրումների միայն առանձին կողմեր, իսկ ՀՀ իրավական համակարգում արժանապատվության հայեցակարգային հակասությունները, ինչպես նաև սահմանադրաիրավական երաշխիքների իրացման հիմնահարցերը ընդհանրապես չեն ուսումնասիրվել: Բացակայում են նաև ուսումնասիրություններ վերաբերելի օրենսդրական փոփոխությունների և արժանապատվության պաշտպանության սահմանադրական կառուցակարգերի զարգացման միտումների առնչությամբ: Ատենախոսության տեսական հիմք են հանդիսացել ինչպես հայ իրավաբան գիտնականների աշխատությունները, մասնավորապես՝ Ն. Այվազյանի, Տ. Բարսեղյանի, Գ. Դանիելյանի, Գ. Հարությունյանի, Գ. Ղազինյանի, Վ. Ներսեսյանցի, Ա. Վաղարշյանի և այլոց, այնպես էլ օտարազգի գիտնականների աշխատությունները, որոնց շարքում կարելի է առանձնացնել Մ. Ադդոյի, Լ. Բարոսսոյի, Հ. Բոյլիի, Մ. Գրիֆֆիի, Ֆ. Դյունի, Մ. Զգուրի, Ա. Էրդելևսկիի, Ա. Էմինեի, Կ. Էնդերսի, Ա. Կովալյովի, Ջ. Կլարկի, Մ. Կրամերի, Ջ. Հելլիսի, Մ. Մարչենկոյի, Կ. Մակրուդենի, Ս. Մոյնի, Մ. Պեննինգայի, Ս. Պինկերի, Վ. Ջոնսի, Վ. Ջեքսոնի, Է. Ռեյների, Մ. Ռոզենի Ա. Սիմոնովի, Ֆ. Սեդի, Օ. Սենսենի, Տ. Օնորեի Դ. Շուլցիների, գիտական աշխատությունները: Վերջին տարիներին քննարկվող առանձին հիմնախնդիրներին նվիրված թեկնածուական ատենախոսութուններ են գրվել ռուս մասնագետների, մասնավորապես՝ Մ. Ալիեվայի, Ա. Դոլժնիկովի, Ջ. Խովժակովայի, Գ. Կուսովի, Վ. Մարչենկոյի, Ի. Սիդորովայի, Տ. Վավիլեչիվայի, Օ. Վլասովայի, Ս. Օմելչենկոյի և Մ. Պալադեվի կողմից:

Ատենախոսության նորմատիվ հիմքերը: Ատենախոսության համար նորմատիվ հիմք են հանդիսացել ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները, ՀՀ օրենքները, ինչպես նաև աշխատանքի հիմնական դրույթներին վերաբերող ՀՀ այլ իրավական ակտեր: Հետազոտության նորմատիվ հիմքը կազմում են նաև միջազգային պայմանագրերը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները, միջազգային կազմակերպությունների ու դրանց խորհրդակցական մարմինների՝ հետազոտության օբյեկտին և առարկային առնչվող ակտերը, ինչպես նաև օտարերկրյա պետությունների հիմնական օրենքները, ընթացիկ օրենսդրությունն ու դատական ակտերը:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության ընթացքում օգտագործվել են ինչպես ընդհանուր (ինդուկցիա, դեդուկցիա, անալիզ, սինթեզ), այնպես էլ հատուկ (համակարգային վերլուծության, պատմական) մե-

թոդները: Հետազոտության ընթացքում լայնորեն օգտագործվել է համեմատական-իրավական մեթոդը: Այս մեթոդների համակցված կիրառումը հնարավորություն է տվել բացահայտել արժանապատվության սահմանադրական կարգավիճակի առանձնահատկությունները, արձանագրել «արժանապատվություն» եզրույթի նորովի ընկալման և կիրառման միտումները, հայրենական իրավական համակարգում արժանապատվության միասնական հայեցակարգի բացակայության փաստը, որպես դրա հետևանք էլ՝ արժանապատվության ուղղակի իրավական պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքների ոչ արդյունավետ իրացման փաստը ՀՀ-ում, ինչպես նաև մշակել միասնական հայեցակարգ արժանապատվության վերաբերյալ և առաջարկել լուծումներ արժանապատվության պաշտպանության արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Ատենախոսության գիտական նորույթը: Աշխատանքում առաջին անգամ «անձի արժանապատվություն» եզրույթը դարձել է համալիր ուսումնասիրության առարկա՝ իր պատմական զարգացման համատեքստում և արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական կառուցակարգերի իրացման հիմնախնդիրների լույսի ներքո: Առաջին անգամ քննարկման առարկա է դարձվել արժանապատվության բովանդակային սահմանների հիմնահարցը, բացահայտվել են դրանց ձևախեղման արդի մարտահրավերները, ինչպես նաև հիմնավորվել է այդ սահմանների սահմանափակ բնույթը: Աշխատանքի շրջանակներում բացահայտվել են արժանապատվության սահմանադրական կարգավիճակի առանձնահատկությունները՝ պայմանավորված տարբեր պատմական ժամանակահատվածներում դրա գործառութային դերակատարմամբ, հիմնավորվել են «արժանապատվություն» եզրույթի նորովի ընկալման և կիրառության միտումները, ինչպես նաև ներկայացվել են վերջինիս անմիջական գործողության և պաշտպանության հիմնական հնարավոր ուղղությունները: Աշխատանքի շրջանակներում ուսումնասիրվել է արժանապատվության հայրենական հայեցակարգը, բացահայտվել վերջինիս արմատական հիմնախնդիրները, դրանց պատճառները, ինչպես նաև ներկայացվել են կառուցակարգային առաջարկություններ միասնական և ներդաշնակ հայեցակարգ մշակելու վերաբերյալ: Առաջին անգամ աշխատանքի շրջանակներում քննարկվել են անձի արժանապատվության սահմանադրաիրավական կառուցակարգերի իրացման հիմնախնդիրները ՀՀ կողմից ստանձնված միջազգային իրավական պարտավորությունների շրջանակներում: Աշխատանքում բացահայտվել են նաև արժանապատվության պաշտպանության սահմանադրական կառուցակարգերի զարգացման արդի միտումները:

Արդյունքում՝ կատարվել են ոչ միայն տեսական եզրահանգումներ, այլև ներկայացվել են անձի արժանապատվության պաշտպանության օրենսդրական կառուցակարգերի կատարելագործման մի շարք գործուն առաջարկություններ:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. Անձի արժանապատվության հայեցակարգային հիմնախնդիրները հաղթահարելու և ուղղակի իրավական պաշտպանության արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է հիմք ընդունել այն գաղափարը, որ արժանա-

պատվության բովանդակությունը հանգում է մարդու՝ Աստծո կերպարով ստեղծված, բանականությամբ, խղճով և կամքով օժտված լինելուն, որոնց ուժով ուրվագծվում են անձի կամահայտնության, կենսագործունեության և այլոց հետ փոխհարաբերությունների հիմնական ուղղությունները և սահմանները: Արժանապատվության բովանդակությունը որպես անձի ինքնավարություն կամ սեփական անձի արժանիքների ինքնագիտակցում կամ գիտակցելու հնարավորություն ներկայացնելը սահմանափակում է արժանապատվության պաշտպանության հնարավորությունը, քանզի այն վերածվում է անձի՝ սուբյեկտիվ առանձնահատկություններով պայմանավորված որոշակի կոնկրետ իրավիճակի նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքի, մինչդեռ անձի արժանապատվության ուղղակի իրավական պաշտպանության կառուցակարգերը կարող են և պետք է իրացվեն անկախ անձի սեփական գնահատականներից կամ նախաձեռնությունից:

2. Ներկայումս նկատվում են «արժանապատվություն» եզրույթի ի չարս կիրառման բացասական միտումներ, ինչի արդյունքում արժանապատվության բովանդակությունից բխեցվում են հակաբարոյական, հակաբանական, հակամարդկային իրավական լուծումներ: Նման միտումները վերացնելու համար անհրաժեշտ է ելնել այն գաղափարից, որ արժանապատվության բացարձակ բնույթը չի ենթադրում արժանապատվության բովանդակության անսահմանափակ բնույթ: Արժանապատվությունը, նախ և առաջ, ենթարկված է ինքնասահմանափակման, այսինքն՝ վերջինիս բովանդակային սահմանները կանխորոշված են իր իսկ բովանդակությունից բխող հատկանիշներով, այն է՝ բանականությամբ և բարոյականությամբ: Իսկ այն մոտեցումն էլ, ըստ որի՝ արժանապատվությունը ենթակա չէ սահմանափակման, կարող է վերաբերել բացառապես արժանապատվության ցանկացած ոչ իրավաչափ միջամտության արգելքին, քանի որ արժանապատվությունը թե՛ լայն, թե՛ նեղ սահմանադրական կարգավիճակի շրջանակներում ենթակա է և ենթարկվում է սահմանափակման, այսինքն՝ իրավաչափ միջամտության:

3. Անձի արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքները բխում են արժանապատվության սահմանադրական կարգավիճակի իրավաընկալումից: Արժանապատվության սահմանադրական կարգավիճակի դրսևորման ձևը պայմանավորված է որոշակի կոնկրետ պատմական ժամանակահատվածում արժանապատվության գործառութային դերակատարմամբ: Անձի արժանապատվության կարգավիճակը՝ որպես մարդու բոլոր իրավունքների և ազատությունների հիմք, ծագել է արժանապատվության սկզբնական գործառույթի իրացման արդյունքում և հանդես է գալիս որպես արժանապատվության սահմանադրական լայն կարգավիճակ: Արժանապատվության՝ բոլոր իրավունքների հիմքը լինելու սահմանադրական կարգավիճակը, թերևս, պահպանվում է մինչ օրս, սակայն նման կարգավիճակով արժանապատվությունը սահմանափակելու պարագայում այն վերածվում է միջնորդավորված արժեքի, որի անմիջական գործողությունն ու պաշտպանությունը վտանգվում են:

4. Անձի արժանապատվության անմիջական պաշտպանության ապահով-

ման համար անհրաժեշտ է հիմք ընդունել այն գաղափարը, որ անմիջական պաշտպանության շրջանակներում այն չի հանգեցվում բոլոր իրավունքների և ազատությունների հիմքը լինելուն: Անձի արժանապատվության անմիջական պաշտպանությունն ապահովվում է անձի՝ մարդու հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններով պայմանավորված, մարդուն բնորոշ ոչ նյութական արժեքների միջոցով, որոնց խախտումն ուղղակիորեն հանգեցնում է անձի մարդկային հատկանիշների նվաստացմանը: Անձի արժանապատվությունը, սակայն, չի հանգեցվում նաև այդ ոչ նյութական արժեքներին, քանզի վերջինիս պաշտպանությունը կարող է իրացվել նաև անկախ որևէ իրավունքի խախտման փաստից: Արժանապատվությունը, պարզապես, հանդես է գալիս որպես այդ արժեքների բովանդակություն և միս ու արյուն է ստանում առավելապես դրանց միջոցով: Նման պայմաններում ծնվում է արժանապատվության՝ սահմանադրական արժեբանությունից բխող կարգավիճակը՝ պաշտպանության համապատասխան սահմանադրական կառուցակարգերով:

5. ՀՀ գործող Սահմանադրությունը չի նախատեսում բավարար երաշխիքներ արժանապատվության անմիջական գործողության համար, քանզի արժանապատվությունն առավելապես դիտարկվում է որպես հիմք՝ իրավունքների և ազատությունների համար, ինչն էլ պայմանավորել է ողջ իրավական համակարգում արժանապատվության անմիջական պաշտպանության արդյունավետ կառուցակարգերի բացակայությունը: Անձի արժանապատվության անմիջական պաշտպանությունը պահանջում է արժանապատվության անմիջական գործողության սահմանադրական ճանաչում, ինչի արդյունքում պետությունը կստանձնի անմիջականորեն արժանապատվության պաշտպանության սահմանադրական պարտավորություն, որն էլ կարող է իրացվել արժանապատվությունը որպես պետական իշխանությունը սահմանափակող արժեք կիրառելու, ինչպես նաև անմիջականորեն արժանապատվության խախտման դեպքերում վերջինիս վերականգնման համար կառուցակարգեր մշակելու միջոցով:

6. Անձի արժանապատվության ուղղակի իրավական պաշտպանության երաշխիք հանդիսացող վիրավորանքի արգելքը ՀՀ-ում իրացվում է սահմանափակ դեպքերում, քանզի վիրավորանքի համար պատասխանատվությունը գործում է բացառապես խոսքի ազատության իրավունքի իրացմամբ արժանապատվությունը նվաստացնելու համատեքստում, մինչդեռ այն հանդիսանում է արժանապատվության նսեմացման ընդամենը մեկ դրսևորում: Արժանապատվության անմիջական պաշտպանության արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է ընդլայնել անձին վիրավորելու իրավախախտման դրսևորման ձևերը՝ դրանցում ներառելով ոչ միայն արտահայտությամբ, այլև անձի արժանապատվությունն արարքով նվաստացնելու դեպքերը:

7. ՀՀ-ում վիրավորանքից անձի արժանապատվության պաշտպանությունը դիտարկվում է բացառապես անձի հեղինակության խախտմամբ պայմանավորված արժանապատվության պաշտպանության համատեքստում, մինչդեռ արժանապատվության վիրավորումը չի ենթադրում բացառապես անձի պատվազրկում

կամ հասարակության բացասական գնահատականի հիման վրա նվաստացում: Ուստիև, վիրավորանքից արժանապատվության պաշտպանության սահմանափակումը հրապարակայնության պարտադիր պահանջով՝ ոչ իրավաչափ է և սահմանափակում է արժանապատվության ուղղակի իրավական պաշտպանության հնարավորությունը: Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է ընդունել ոչ հրապարակային վիրավորանքի համար պատասխանատվություն նախատեսող իրավական ակտ կամ վիրավորանքի համար պատասխանատվություն նախատեսող ներկայիս կանոնակարգման շրջանակներից հանել վիրավորանքի հրապարակայնության չափանիշը:

8. Հայրենական իրավական համակարգում ընդունված այն տեսակետը, ըստ որի՝ բարոյական վնասի ինստիտուտը ՀՀ-ում բացակայում է, նպատակահարմար է վերանայել: Իրավակիրառական պրակտիկայում իրավասու մարմինները պետք է հիմք ընդունեն այն գաղափարը, որ բարոյական վնասի հատուցումը չի ենթադրում բացառապես վնասի դրամական հատուցում: Բոլոր այն կառուցակարգերը, որոնք ուղղված են անձի խախտված ոչ նյութական արժեքների վերականգնմանը, հանդիսանում են անձին պատճառված ոչ նյութական (բարոյական)/հոգեկան վնասի հատուցում: ՀՀ օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է ՀՀ-ում թե՛ բարոյական վնասի ինստիտուտի, թե՛ այդ վնասի հատուցման ձևերի առկայության մասին՝ թե՛ ոչ նյութական հատուցման և թե՛ նյութական հատուցման տեսքով, որոնք, թերևս, գործում են որոշակի վերապահումներով:

9. ՀՀ-ում անձի արժանապատվության ուղղակի իրավական պաշտպանությունն առավելապես իրականացվում է ՀՀ սահմանադրական դատարանի կողմից, որի որոշումներում արտացոլված իրավական դիրքորոշումների տրամաբանությամբ հնարավոր է ձևավորել արժանապատվության ուղղակի իրավական պաշտպանության միասնական հայեցակարգ: ՄԴՈ-1121 որոշման տրամաբանությանը համահունչ անձի արժանապատվության անմիջական պաշտպանությունը նպատակահարմար է իրականացնել անձի հոգեբանական և ֆիզիկական հավասարակշռությունը խախտող ցանկացած միջամտությունից: Հետևաբար, ՀՀ-ում ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտի օրենսդրական բարեփոխումների սահմանափակումը որոշակի ոչ նյութական արժեքների խախտման դեպքերում ոչ նյութական վնասի հատուցում ստանալու անձի իրավունքով, ինչպես նաև ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտի սահմանափակումը հանրային իրավահարաբերությունների շրջանակներով ոչ իրավաչափ է: Նպատակահարմար է ոչ նյութական վնասի հատուցման իրավունքի իրացման հնարավորությունը տարածել բոլոր ոչ նյութական արժեքների նկատմամբ թե՛ հանրային, թե՛ մասնավոր իրավահարաբերությունների շրջանակներում:

10. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիային կից 7-րդ Արձանագրության 3-րդ հոդվածի ուժով արդարացված անձինք ոչ բոլոր դեպքերում իրավունք ունեն ստանալու ոչ նյութական վնասի դրամական հատուցում: Սակայն, պետության պարտավորությունը արդարացված անձանց հատուցելու պատճառված ոչ նյու-

թական վնասը միայն այդ հոդվածի չափանիշների շրջանակներում՝ անարդարացիորեն սահմանափակում է որևէ հակահիրավական արարք չգործած անձի արժանապատվության նկատմամբ պետության գործողությունների միջոցով թույլ տրված միջամտությամբ պատճառված վնասի հատուցում ստանալու հնարավորությունը, ուստիև Կոնվենցիային կից 7-րդ Արձանագրության 3-րդ հոդվածն անհրաժեշտ է դիտարկել որպես ապօրինի դատապարտված անձանց տրամադրվող ոչ նյութական վնասի հատուցման՝ պետության պարտավորության նվազագույն պարտադիր չափ և ՀՀ օրենսդրության և ՄԻԵԴ-ի՝ Կոնվենցիայի այլ հոդվածներով զարգացրած դիրքորոշումների համադրված վերլուծության կիրառմամբ ընդլայնել արդարացված անձանց ոչ նյութական վնասի հատուցման հնարավորության իրացման սահմանները:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության մեջ բացահայտված հիմնախնդիրների առնչությամբ կատարված վերլուծությունները, առաջարկություններն ու հիմնավորումները կարող են նպաստել հայրենական իրավական համակարգում արժանապատվության նոր ամբողջական հայեցակարգի մշակման, ՀՀ օրենսդրության մեջ նշված նպատակի համար անհրաժեշտ փոփոխություններ կատարելու, ինչպես նաև անձի արժանապատվության սահմանադրաիրավական երաշխիքների իրացման արդյունավետության բարձրացման աշխատանքներին: Ատենախոսության նյութերը կարող են օգտագործվել «Սահմանադրական իրավունք», «Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական իրավունք», «Քրեական իրավունք» դասընթացներում և հետագա գիտական հետազոտություններում, ինչպես նաև այն բոլոր դասընթացներում, որոնց հետազոտության առարկան որևէ կերպ առնչվում է անձի արժանապատվության պաշտպանության հիմնահարցերին:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Հետազոտության արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում և 2014 թվականի հոկտեմբերի 23-25 ՀՀ սահմանադրական դատարանի և Վենետիկի հանձնաժողովի կողմից կազմակերպված՝ «Մարդու արժանապատվության սահմանադրական կարգավիճակը» խորագրով երևանյան 19-րդ միջազգային խորհրդաժողովի շրջանակներում ներկայացված զեկույցում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, 3 գլուխներից, դրանցում ընդգրկված 8 պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքը, նորմատիվ հիմքերը, մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը և ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության **առաջին գլուխը**, որը վերտառված է «Անձի արժանապատվության բովանդակությունը և սահմանադրական կարգավիճակը», բաղկացած է երեք պարագրաֆից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ «Անձի արժանապատվության բովանդակությունը պատմափիլիսոփայական զարգացման համատեքստում» վերտառությամբ, Հեղինակի կողմից ներկայացվում են «արժանապատվություն» եզրույթի բովանդակության մեկնաբանությունները տեսական գրականության շրջանակներում, դրանցից յուրաքանչյուրի բացասական կողմերը: Քննադատվում է այն մոտեցումը, ըստ որի՝ արժանապատվությունը դիտարկվում է որպես անձի ինքնարժեվորում, ինքնահարգանք կամ անձի սուբյեկտիվ պատկերացումն իր իսկ հատկանիշների վերաբերյալ: Քննադատվում է նաև անձի արժանապատվությունը որպես անձի ինքնավարություն մեկնաբանելու միտումը: Նշվում է, որ նման մոտեցումները արհեստականորեն սահմանափակում են արժանապատվության պաշտպանության հնարավորությունը սահմանադրաիրավական արժեբանության համատեքստում: Հեղինակի կողմից ներկայացվում է նաև արժանապատվության՝ որպես տեսափիլիսոփայական կատեգորիայի զարգացման ընթացքը, ինչպես նաև «արժանապատվություն» եզրույթի բովանդակությունն ուսումնասիրվում է «մարդ» եզրույթի հետ հարաբերակցության համատեքստում:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Անձի արժանապատվության սահմանադրական կարգավիճակը և արժանապատվության ուղղակի իրավական պաշտպանության արդի հիմնախնդիրները» վերտառությամբ, Հեղինակը քննարկում է արժանապատվության ուղղակի իրավական պաշտպանության հնարավորությունն ու պաշտպանության ձևերը՝ պայմանավորված արժանապատվության սահմանադրական կարգավիճակի առանձնահատկություններով: Հիմնավորվում է, որ անձի արժանապատվության սահմանադրական կարգավիճակը՝ բոլոր իրավունքների և ազատությունների հիմքը լինելով սահմանափակելու պարագայում վտանգվում է անմիջականորեն արժանապատվության պաշտպանության հնարավորությունը, քանզի նման ընկալման պարագայում արժանապատվությունը վերածվում է միջնորդավորված կատեգորիայի: Հեղինակի կողմից ներկայացվում է միջազգային իրավական փաստաթղթերի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների, օտարերկրյա պետությունների դատական ակտերի վերլուծություն՝ ուղղված արժանապատվության անմիջական պաշտպանության միտումների բացահայտմանը: Անձի արժանապատվության անմիջական պաշտպանության արդի միտումների և արժանապատվության բովանդակության՝ ատենախոսության մեջ ներկայացված մեկնաբանության համադրության հիման վրա Հեղինակը եզրահանգում է, որ անձի արժանապատվության անմիջական պաշտպանությունն ապահովվում է անձի՝ մարդու հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններով պայմանավորված, մարդուն բնորոշ ոչ նյութական արժեքների միջոցով, որոնց խախտումն ուղղակիորեն հանգեցնում է անձի մարդկային հատկանիշների նվաստացմանը, սակայն անձի արժանապատվությունը չի հանգեցվում նաև այդ ոչ նյութական արժեքներին,

քանզի վերջինիս պաշտպանությունը կարող է իրացվել նաև անկախ որևէ իրավունքի խախտման փաստից. արժանապատվությունը, պարզապես, հանդես է գալիս որպես այդ արժեքների բովանդակություն և միս ու արյուն է ստանում առավելապես դրանց միջոցով: Այս պարագրաֆում հեղինակը նաև քննարկում է ՀՀ սահմանադրական դատարանի դերակատարությունն անձի արժանապատվության ուղղակի պաշտպանության հարցում:

Առաջին գլխի երրորդ պարագարաֆում՝ «Անձի արժանապատվության բովանդակային սահմանները և դրանց ընդլայնման արդի մարտահրավերները» վերտառությամբ, Հեղինակն անդրադարձել է արժանապատվության բովանդակության սահմանների հիմնահարցին՝ այն պատճառաբանությամբ, որ ներկայումս նկատվում են արժանապատվության բովանդակության խեղաթյուրման բացասական միտումներ, մինչդեռ արժանապատվությունն իրավական հարթությունում ունի արժեբանական և գաղափարախոսական դերակատարում, հետևաբար արժանապատվության բովանդակության սահմանները պետք է լինեն որոշակի նվազագույնը իրավաընկալման մակարդակում: Այս պարագրաֆում հեղինակը քննարկում է արժանապատվության բովանդակության ընդլայնման արդի մարտահրավերները մասնագիտական գրականության մեջ արմատավորված՝ արժանապատվության որպես բացարձակ և անսահմանափակ բնույթի կատեգորիայի, ընկալման համատեքստում, և եզրահանգում, որ արժանապատվության բացարձակ բնույթը չի ենթադրում արժանապատվության բովանդակության անսահմանափակ բնույթ: Արժանապատվությունը, նախ և առաջ, ենթարկված է ինքնասահմանափակման, այսինքն՝ վերջինիս բովանդակային սահմանները կանխորոշված են իր իսկ բովանդակությունից բխող հատկանիշներով, այն է՝ բանականությամբ և բարոյականությամբ: Հեղինակը նաև անդրադառնում է արժանապատվության և այլ իրավունքների հարաբերակցության հիմնահարցին և եզրահանգում, որ այս համատեքստում ևս արժանապատվությունն օժտված չէ անսահմանափակ բնույթով:

Ատենախոսության **երկրորդ գլուխը**՝ «ՀՀ իրավական համակարգում անձի արժանապատվության հայեցակարգը եվ արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական կառուցակարգերի արդի հիմնախնդիրները» վերտառությամբ, կազմված է երկու պարագրաֆներից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Անձի արժանապատվության հայեցակարգային հիմնախնդիրները ՀՀ-ում» վերտառությամբ, Հեղինակը համակարգային վերլուծության է ենթարկում ՀՀ իրավական համակարգում արմատավորված արժանապատվության հայեցակարգային հիմնախնդիրները, մատնանշում այն պատճառները, որոնք խոչընդոտում են արժանապատվության միասնական հայեցակարգ մշակելուն և արժանապատվության անմիջական պաշտպանությունն ապահովելուն: Նման հիմնախնդիրների շարքում Հեղինակը, առաջին հերթին, առանձնացնում է արժանապատվության անմիջական պաշտպանությունն ապահովող սահմանադրաիրավական բավարար երաշխիքների բացակայությունը՝ պայմանավորված ՀՀ Սահմանադրության տեքստում արժա-

նապատվության սահմանադրական կարգավիճակն առավելապես որպես բոլոր իրավունքների հիմք ճանաչելու հանգամանքով և եզրահանգում է, որ անձի արժանապատվության անմիջական պաշտպանությունը պահանջում է արժանապատվության անմիջական գործողության սահմանադրական ճանաչում, ինչի արդյունքում պետությունը կստանձնի անմիջականորեն արժանապատվության պաշտպանության սահմանադրական պարտավորություն, որն էլ կարող է իրացվել արժանապատվությունը որպես պետական իշխանությունը սահմանափակող արժեք կիրառելու, ինչպես նաև անմիջականորեն արժանապատվության խախտման դեպքերում վերջինիս վերականգնման համար կառուցակարգեր մշակելու միջոցով: Հայեցակարգային հիմնախնդիրների շարքում հեղինակը քննարկում է նաև արժանապատվության սահմանադրական կարգավիճակ-արժանապատվության բովանդակություն հարաբերակցությունը՝ պայմանավորված դրանց տարբերակման բացակայությամբ ՀՀ-ում, ինչպես նաև ՀՀ իրավական համակարգում արժանապատվության բովանդակության մեկնաբանության հիմնախնդիրները, և եզրահանգում, որ անձի արժանապատվության ներդաշնակ հայեցակարգ մշակելու համար անհրաժեշտ է հստակ տարբերակել արժանապատվության բովանդակությունը դրա հիման վրա ձևավորվող սահմանադրական կարգավիճակից: Արժանապատվության՝ որպես բոլոր իրավունքների հիմք լինելու, այսինքն՝ արժանապատվության լայն կարգավիճակն ընդունելու պարագայում պետք է հիմք ընդունվի նաև արժանապատվության պատմափիլիսոփայական համատեքստում զարգացված բովանդակությունը, իսկ անձի արժանապատվության՝ որպես ինքնահարգանք, ինքնավարություն, սեփական կարծիք և նման մեկնաբանությունները պետք է դիտարկել բացառապես որպես արժանապատվության ուղղակի իրավական կիրառության շրջանակներում դրա հնարավոր դրսևորումներ: Այս պարագրաֆում Հեղինակը քննարկում է նաև արժանապատվության անմիջական պաշտպանության օրենսդրական կառուցակարգերը և ՀՀ-ում արժանապատվության բովանդակության մեկնաբանության հիմնախնդիրներին առաջադրված լուծումների լույսի ներքո եզրահանգում, որ անձի արժանապատվության ուղղակի իրավական պաշտպանության կառուցակարգերը կարող են և պետք է իրացվեն անկախ անձի սեփական գնահատականներից կամ նախաձեռնությունից:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Անձի արժանապատվությունը հարգելու պարտականությունը որպես արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիք» վերտառությամբ, Հեղինակն անդրադարձել է անմիջականորեն արժանապատվության խախտման դեպքերի՝ իրավասու մարմինների կողմից քննության առնելու սահմանադրաիրավական երաշխիքների իրացման հիմնախնդիրներին: Հիմնավորվել է անձի արժանապատվությունը վիրավորելուց պաշտպանելու կառուցակարգի ոչ արդյունավետ բնույթը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ վիրավորանքի համար պատասխանատվությունը գործում է բացառապես խոսքի ազատության իրավունքի իրացմամբ արժանապատվությունը նվաստացնելու համատեքստում, մինչդեռ այն հանդի-

սանում է արժանապատվության նսեմացման ընդամենը մեկ դրսևորում: Անձի արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքների արդյունավետ իրացման համար առաջարկվել է ընդլայնել անձին վիրավորելու իրավախախտման դրսևորման ձևերը: Հեղինակն անդրադարձել է նաև ՀՀ-ում արժանապատվությունը վիրավորելու համատեքստում վերջինիս ընկալման հիմնահարցին՝ մատնանշելով, որ ՀՀ-ում վիրավորանքից անձի արժանապատվության պաշտպանությունը դիտարկվում է բացառապես անձի հեղինակության խախտմամբ պայմանավորված արժանապատվության պաշտպանության համատեքստում, մինչդեռ արժանապատվության վիրավորումը չի ենթադրում բացառապես անձի պատվազրկում կամ հասարակության բացասական գնահատականի հիման վրա նվաստացում: Ուստիև, վիրավորանքից արժանապատվության պաշտպանության սահմանափակումը հրապարակայնության պարտադիր պահանջով՝ ոչ իրավաչափ է: Հեղինակն անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածի իրացման հիմնախնդիրներին և ներկայացրել վերջիններս լուծելու հնարավոր ուղիները:

Ատենախոսության **երրորդ գլուխը՝** «Անձի արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքների զարգացման արդի միտումները ՀՀ իրավական համակարգում» վերտառությամբ, կազմված է 3 պարագրաֆներից:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆը՝ «Անձի արժանապատվությանը պատճառված վնասի փոխհատուցումը որպես արժանապատվության ուղղակի իրավական պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիք» վերտառությամբ, նվիրված է ՀՀ իրավական համակարգում անձին պատճառված բարոյական վնասի ինստիտուտի հիմնահարցերի ուսումնասիրությանը: ՀՀ-ում բարոյական վնասի ինստիտուտի բացակայության վերաբերյալ դատողությունների համատեքստում բարոյական վնասի ինստիտուտը դիտարկելով՝ Հեղինակը շեշտում է, որ թե՛ մասնագիտական գրականության, թե՛ իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում արմատացած այս մոտեցումը ենթակա է վերանայման: Հեղինակը քննարկում է նաև բարոյական վնասի հատուցման ձևերի հիմնահարցը և նշում, որ այս առնչությամբ նպատակահարմար է հիմք ընդունել այն գաղափարը, որ բարոյական վնասի հատուցումը չի ենթադրում բացառապես վնասի դրամական հատուցում: Բոլոր այն կառուցակարգերը, որոնք ուղղված են անձի խախտված ոչ նյութական արժեքների վերականգնմանը, հանդիսանում են անձին պատճառված ոչ նյութական (բարոյական)/ հոգեկան վնասի հատուցում: Սահմանադրաիրավական արժեբանության, միջազգային իրավական պարտավորությունների, ընթացիկ օրենսդրության ուսումնասիրության արդյունքում Հեղինակը փաստում է ՀՀ-ում բարոյական վնասի հատուցման ձևերի առկայությունը:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Անձի արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքների իրացման հիմնախնդիրները ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում» վերտառությամբ, Հեղինակը գնահատում է անձի արժանապատվության

պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքների իրացման օրենսդրական կառուցակարգերի համապատասխանությունը ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին, մասնավորապես համալիր վերլուծության է ենթարկում ոչ նյութական վնասի փոխհատուցման ինստիտուտի՝ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1121 որոշման և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա կատարված արմատական փոփոխությունները: Այս փոփոխությունների առնչությամբ Հեղինակը նշում է, որ դրանք չեն համապատասխանում ՍԴՈ-1121 որոշումից բխող պահանջներին, ոչ էլ ապահովում են ՀՀ ստանձնած միջազգային իրավական պարտավորությունների արդյունավետ կատարումը՝ այն պատճառաբանությամբ, որ դրանք անձի բարոյական վնասի հատուցման իրավունքի իրացման հնարավորությունը ոչ իրավաչափորեն սահմանափակում են միայն որոշակի ոչ նյութական արժեքների խախտման դեպքերով, ինչի արդյունքում առաջ են գալիս ներօրենսդրական հակասություններ՝ առաջացնելով ոլորտում իրավական անորոշություն: Հեղինակը շեշտում է, որ ոչ նյութական վնասի հատուցման իրավունքը անհրաժեշտ է տարածել բոլոր ոչ նյութական արժեքների նկատմամբ: Հեղինակը որպես վերաբերելի փոփոխությունների բացասական կողմ է դիտարկում ոչ նյութական վնասի հատուցման իրավունքի սահմանափակումը բացառապես հանրային իրավահարաբերությունների շրջանակով: Հեղինակը մատնանշում է նաև փոփոխությունների իրական իրացման խոչընդոտները:

Հեղինակը միջազգային իրավական պարտավորությունների և օտարերկրյա համարժեք փորձի համատեքստում դիտարկում է նաև անձի արժանապատվության խախտման դեպքերում իրավական պաշտպանության և իրավունքի վերականգնման ներպետական կառուցակարգերը և ներկայացնում առաջարկություններ ոլորտի բարելավման համար:

Երրորդ գլխի երրորդ պարագրաֆը՝ «Ապօրինի դատապարտված անձին պատճառված ոչ նյութական վնասի հատուցումը որպես անձի արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիք» վերտառությամբ, պարագրաֆում Հեղինակն անդրադարձել է ապօրինի դատապարտված անձանց բարոյական վնասի հատուցման հիմնախնդիրներին՝ միջազգային և ներպետական կառուցակարգերի լույսի ներքո: Հեղինակի կողմից քննարկվել են նաև վերաբերելի հիմնահարցերը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային կից 7-րդ Արձանագրության 3-րդ հոդվածի համատեքստում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վկայակոչված հոդվածը նախատեսում է բարոյական վնասի հատուցում ապօրինի դատապարտված անձանց համար ոչ բոլոր դեպքերում՝ Հեղինակը փորձ է արել բացահայտել վկայակոչված հոդվածով նախատեսված չափանիշների բացակայության պայմաններում ապօրինի դատապարտված անձանց պատճառված բարոյական վնասի հատուցման իրավունքի իրացման հնարավորությունները:

Եզրակացությունում ընդգրկված են հետազոտության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները, ինչպես նաև օրենսդրության կատարելագործ-

ման առնչությամբ ներկայացված առաջարկությունները, որոնք ամփոփ հանգում են հետևյալին.

1. Արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքների իրացման արդյունավետությունը պայմանավորված է, ի թիվս այլոց, արժանապատվության բովանդակության մեկնաբանությամբ: Թերևս, մասնագիտական գրականության մեջ չկա միանշանակ մոտեցում այս հիմնահարցի վերաբերյալ, արժանապատվությունն առավել հաճախ ներկայացվում է որպես անձի ինքնավարություն, ինքնարժեվորում, կարծիք սեփական դրական հատկանիշների վերաբերյալ: Ներկայացված մեկնաբանություններն արհեստականորեն սահմանափակում են արժանապատվության անմիջական պաշտպանության հնարավորությունը: Արժանապատվության բովանդակությունը նպատակահարմար է բացահայտել դրա պատմական զարգացման համատեքստում, մարդու՝ կենդանիներից նրան տարբերակող հատկանիշների և արժանապատվության անմիջական պաշտպանության կառուցակարգերի լույսի ներքո:

2. Անձի արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքների իրացման հիմնախնդիրները նպատակահարմար է դիտարկել արժանապատվության բովանդակային սահմանների լույսի ներքո: Արժանապատվության սահմանների հիմնահարցը երբևէ չի քննարկվել մասնագիտական գրականության շրջանակներում, քանզի մարդկությունը մինչ այժմ չէր բախվել դրա անհրաժեշտությանը, սակայն, մեր օրերում արդեն առկա է նման անհրաժեշտություն՝ այն պատճառաբանությամբ, որ անձի արժանապատվությունը վերացական կատեգորիայից վերածվել է գործուն իրավական կառուցակարգի, որի միջոցով ուղղակի լուծումներ են ստանում իրավական հիմնախնդիրները, հետևաբար դրա սահմանները պետք է հստակ ուրվագծված լինեն առնվազն մասնագիտական գրականության մեջ և իրավաընկալման մակարդակում: Ներկայումս արժանապատվության՝ որպես բացարձակ կատեգորիայի, բացարձակ արժեքի ընկալումը չարաշահվում է, ինչի արդյունքում խախտվում է հենց ինքը՝ արժանապատվությունը: Այս առնչությամբ կարևորվում է արժանապատվության բացարձակ բնույթի և արժանապատվության իրացման չափանիշների հարաբերակցության հիմնահարցը: Այս հիմնախնդիրների համատեքստում «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և 13-րդ կետը նպատակահարմար է վերանայել:

3. Անձի արժանապատվության անմիջական պաշտպանության ապահովման համար կարևոր է նաև արժանապատվության սահմանափակման հիմնահարցը՝ մասնագիտական գրականության մեջ տարածում գտած այն մոտեցման լույսի ներքո, համաձայն որի՝ արժանապատվությունը ենթակա չէ սահմանափակման: Արժանապատվության անսահմանափակ բնույթը հնարավոր է դիտարկել բացառապես դրա նսեմացման, այսինքն՝ ոչ իրավաչափ միջամտության արգելքի համատեքստում, սակայն իրավական իրականության շրջանակներում արժանապատվությունը ենթարկվում է հաճախ իրավաչափ միջամտության: Ար-

ժանապատվությունը սահմանափակվում է նաև իրավունքների և ազատությունների հիմքը լինելու սահմանադրական կարգավիճակի շրջանակներում, քանզի վերջինիս ընդհանուր տրամաբանությունից բխում է, որ իրավունքների սահմանափակումը հանգեցնում է նաև արժանապատվության սահմանափակման:

4. Արժանապատվության սահմանադրաիրավական պաշտպանության ապահովման համար կարևորվում է արժանապատվության բովանդակության և արժանապատվության սահմանադրական կարգավիճակի՝ որպես Սահմանադրության մեջ արժանապատվության դերակատարում, դրսևորման ձև՝ դրա հիմքում ընկած արժանապատվության բովանդակային և գործառութային առանձնահատկություններով, տարբերակումը: Մասնագիտական գրականության մեջ առաջ է եկել եզրութային շփոթ նման տարբերակման բացակայության հետևանքով, ինչն էլ հանգեցրել է արժանապատվության սահմանադրական հստակ հայեցակարգի բացակայության, ինչի բացասական հետևանքներն էլ իրենց արտացոլումն են գտել արժանապատվության պաշտպանության կառուցակարգերի մակարդակում:

5. Գրականության շրջանակներում գերակայում է այն մոտեցումը, համաձայն որի՝ արժանապատվությունը դիտարկվում է որպես բոլոր իրավունքների և ազատությունների հիմք: Նման մոտեցումը սահմանափակում է արժանապատվության անմիջական գործողության և անմիջական պաշտպանության հնարավորությունը, քանզի արժանապատվությունը վերածվում է միջնորդավորված կատեգորիայի, որի պաշտպանությունը տարրալուծվում է բոլոր իրավունքների և ազատությունների պաշտպանության մեջ: Արժանապատվության ուղղակի իրավական կիրառության շրջանակներում արժանապատվության նսեմացման հարցը քննության չի առնվում անձի բոլոր իրավունքների խախտման պարագայում ո՛չ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի շրջանակներում, ո՛չ օտարերկրյա պետությունների դատական մարմինների կողմից, ո՛չ ՀՀ արդարադատության շրջանակներում:

6. Անձի արժանապատվության անմիջական պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքների իրացման հարցում հատկապես կարևորվում է ՀՀ սահմանադրական դատարանի դերը: ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ընդունված որոշումներում արտացոլված իրավական դիրքորոշումները սկզբունքային նշանակություն ունեն ՀՀ-ում անձի արժանապատվության անմիջական պաշտպանության միասնական հայեցակարգ մշակելու հարցում, քանզի թույլ են տալիս բացահայտելու արժանապատվության անմիջական կիրառության միտումները ՀՀ-ում, բացահայտել արժանապատվության բովանդակության որոշ կողմեր անմիջական կիրառության համատեքստում, ինչպես նաև մշակել կառուցակարգեր արժանապատվության անմիջական պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքների արդյունավետ իրացման համար:

6. Արժանապատվության անմիջական պաշտպանության համար, ի թիվս այլնի, նպատակահարմար է՝

1) սահմանադրական մակարդակում ճանաչել արժանապատվության ան-

միջական գործողությունը:

2) Խոշտանգումների, անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի արգելքը կապել արժանապատվության նվաստացման հետ: Ազատազրկվածների, կալանավորվածների, ձերբակալվածների վերաբերյալ կանոնակարգումը նախատեսել այլ հոդվածում:

3) ՀՀ Սահմանադրության մեջ արժանապատվության անմիջական պաշտպանությունը երաշխավորող հոդվածում ներառել նաև այն ոչ նյութական արժեքները, որոնց էությանն առավել մոտ է արժանապատվությունը:

4) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում ավելացնել «անձի արժանապատվությամբ» արտահայտությունը:

5) Հետևողական կերպով վերացնել վերաբերելի ոլորտում առկա օրենսդրական հակասությունները և բացերը, որոնք ի հայտ են եկել անձի արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքների օրենսդրական կանոնակարգումների ոչ համակարգված բնույթի հետևանքով:

7. ՀՀ-ում, մի կողմից, անձի արժանապատվությունը ներկայացվում է որպես հիմք բոլոր իրավունքների համար, մյուս կողմից՝ սեփական անձի ինքնագնահատական, արդյունքում թյուրիմացաբար ստացվում է, որ արժանապատվության պաշտպանությունն իրականացվում է բացառապես այն դեպքում, երբ անձն իր սուբյեկտիվ գնահատականն է տալիս այս կամ այն իրավիճակին: Նման պայմաններում խնդրահարույց է դառնում այն անձանց արժանապատվության անմիջական պաշտպանության կառուցակարգերից օգտվելու հնարավորությունը, ովքեր զրկված են սեփական հատկանիշները գիտակցելու, արժեվորելու և իրենց նկատմամբ դրսևորված վարքագծի բնույթը գնահատելու հնարավորությունից: Հիմնավորվել է, որ արժանապատվության նվաստացման փաստը և արժանապատվության պաշտպանությունը չեն կարող պայմանավորվել միայն անձի ինքնարժեվորման առկայության կամ բացակայության փաստով: Այս մասին են վկայում թե՛ արժանապատվության բովանդակության, թե՛ արժանապատվության պաշտպանության կառուցակարգերի առանձնահատկությունները:

8. Բոլորի կողմից անձի արժանապատվությունը հարգելու և այն չնվաստացնելու սահմանադրաիրավական պահանջն իրացվում է ճյուղային օրենսդրության միջոցով, ի թիվս այլնի, հանդես գալով որպես անձի արժանապատվությունը վիրավորելու արգելք: Հայրենական մասնագիտական գրականության մեջ «անձի արժանապատվությունը վիրավորել» հասկացությունը գրեթե չի քննարկվել: ՀՀ վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ ՀՀ իրավական համակարգում «անձի արժանապատվությունը վիրավորել» հասկացությունն ընկալվում է թերի, չի համապատասխանում միջազգային ժամանակակից զարգացումներին և ՀՀ ստանձնած միջազգային իրավական պարտավորությունների ոգուն: Խնդիրը հիմնականում պայմանավորված է ՀՀ-ում վիրավիրանքի իրավախախտման բովանդակության տարբերակմամբ՝ կախված այն կանոնակարգող իրավունքի ճյուղից, ինչպես նաև վիրավորանքից

պաշտպանությունը անձի պատվի պաշտպանությանը հանգեցնելու փաստով: Խնդիրն առավելապես հանգում է հետևյալին՝

1) վիրավորանքից պաշտպանությունը սահմանափակված է բացառապես խոսքի ազատության իրավունքի իրացմամբ արժանապատվության նվաստացումից պաշտպանությամբ:

2) Վիրավորանքից պաշտպանությունը սահմանափակված է վիրավորանքի՝ հրապարակայնության չափանիշի առկայությամբ:

9. Արժանապատվության անմիջական պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքների արդյունավետ իրացման ապահովման համար, ի թիվս այլնի, անհրաժեշտ է ապահովել ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածի համահունչ արտացոլումն օրենսդրության մեջ, ինչը թույլ կտա իրավասու մարմիններին քննության առնել անմիջականորեն արժանապատվության նվաստացման դեպքերը, քանի որ ներկայումս ՀՀ-ում չի երաշխավորվում արժանապատվության նվաստացման բոլոր հնարավոր դեպքերից պաշտպանության իրավունքի իրացման հնարավորությունը՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:

10. Անձի պատիվն ու արժանապատվությունն անպարկեշտ ձեւով ստորացնելու հանցագործության ապաքրեականացումը խոչընդոտում է մարդու արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքների արդյունավետ իրացման հնարավորությունը: Նման հանցակազմի առկայությունը չի հակասի ՀՀ ստանձնած միջազգային իրավական այն պարտավորության իրացմանը, որի հետևանքով նշված արարքը ապաքրեականացվեց, քանի որ ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններից բխել է բացառապես արտահայտվելու իրավունքի իրացման արդյունքում վրա հասած բացասական հետևանքների համար պատասխանատվության ապաքրեականացումը, միջազգային պարտավորություններից չի բխում անձի արժանապատվության նվաստացմանն ուղղված բոլոր տեսակի գործողությունների ապաքրեականացում կամ ցանկացած տեսակի պատասխանատվության վերացում:

11. Անձի արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքների շարքում կարևորվել է արժանապատվությանը պատճառված վնասի հատուցման ինստիտուտը: Հիմնավորվել է ՀՀ-ում անձին պատճառված ոչ նյութական վնասի հատուցման ձևերի առկայության փաստը, ինչպես նաև բացահայտվել են այն օրենսդրական թերությունները, որոնք խոչընդոտում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի արդյունավետ իրացումը ներպետական մակարդակում: Այդ թերությունները, մասնավորապես հանգում են հետևյալին.

1) պատճառված ոչ նյութական վնասի հատուցման հնարավորությունը՝ թե՛ հատուցման ոչ նյութական և թե՛ նյութական հատուցման ձևով, նախատեսվում է ոչ բոլոր նյութական արժեքների խախտման դեպքում:

2) Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ, 3-րդ և 5-րդ

հոդվածների խախտման դեպքերը տարածվում են միայն հանրային իրավահարաբերությունների նկատմամբ:

3) Ոչ նյութական վնասի հատուցմանն ուղղված օրենսդրական բարեփոխումներն ուղղակիորեն վկայակոչում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հոդվածները:

4) Այդ բարեփոխումներով նախատեսվում է ոչ նյութական վնասի հատուցման առավելագույն չափ, իսկ դրանք գերազանցելու հնարավորությունը պայմանավորվում է ծանր հետևանքների ի հայտ գալով, այսինքն՝ դատարանին վերապահվում է այդ հետևանքների ծանր կամ ոչ ծանր բնույթը գնահատելու հայեցողություն, այնինչ Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածները ճանաչել է Կոնվենցիայի հիմքը, հետևաբար դրանց խախտումն առաջ է բերում ծանր հետևանքներ:

5) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով ոչ գույքային վնասի հատուցման չափի հաշվարկման կանոնները բացակայում են:

6) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը հնարավորություն չի ընձեռում վիրավորանքի և զրպարտության դեպքում գերազանցել այդ հոդվածով սահմանված ոչ նյութական վնասի դրամական հատուցման չափը բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, որոնք առաջացրել են առավել ծանր հետևանքներ անձի համար:

12. Բոլոր այն դեպքերում, երբ անձի իրավունքների խախտումը տեղի է ունենում այնպիսի ինտենսիվությամբ, որ նույնիսկ ուղղված լինելով նյութական արժեքների դեմ՝ իր ուժգնությամբ խախտում է նաև անձի արժանապատվությունը, օրինակ՝ պատճառում է վախ, նվաստացնում անձին, պետք է նաև հատուցում նախատեսվի այս դեպքերում, խոսքը, մասնավորապես, վերաբերում է այն դեպքերին, երբ անձը դառնում է քրեական հանցագործության զոհ: Քրեական հանցագործության զոհ դարձած անձինք բոլոր դեպքերում իրավունք ունեն դիմելու և ստանալու իրենց պատճառված ոչ նյութական վնասի հատուցում, առավելապես այն դեպքում, երբ անձը դարձել է այնպիսի հանցանքի զոհ, որն առաջին հերթին ուղղված է անձի հոգեկան և ֆիզիկական հավասարակշռության դեմ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են Հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Առաքելյան Ն., «Անձի արժանապատվության սահմանադրաիրավական բովանդակությունը», «Արդարադատություն», 2013թ., մարտ 1(20), էջեր 31-36:

2. Առաքելյան Ն., «Ապօրինի դատապարտված անձին պատճառված ոչ նյութական վնասի հատուցումը որպես անձի արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիք», «Դատական իշխանություն», 2013 թ., սեպտեմբեր 9/170, էջեր 20-24:

3. Առաքելյան Ն., «Անձին պատճառված բարոյական վնասի հատուցումը որպես անձի արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավա-

կան երաշխիք», «Դատական իշխանություն», 2013 թ., հոկտեմբեր-նոյեմբեր 10-11/172-173, էջեր 52-57:

4. Առաքելյան Ն., «Անձի արժանապատվության պաշտպանության կառուցակարգերի արդյունավետ իրացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», «Արդարադատություն», 2014 թ., սեպտեմբեր 3(26), էջեր 8-13:

5. Առաքելյան Ն., «Անձի արժանապատվության սահմանադրական կարգավիճակը», «ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2013թ. նստաշրջանի նյութերի ժողովածու», Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2014թ., էջեր 35-42:

6. Առաքելյան Ն., «Անձի արժանապատվությունը հարգելու սահմանադրաիրավական պահանջի իրացման հայեցակարգային հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», «Դատական իշխանություն», 2014թ., սեպտեմբեր, 9/183, էջեր 24-29:

7. Arakelyan N., «Constitutional status of human dignity and its reflection within constitutional justice», report, «The constitutional status of human dignity», XIX Yerevan International Conference, 2014, October, Yerevan.

АРАКЕЛЯН НЕЛЛИ АРМЕНОВНА

КОНСТИТУЦИОННЫЕ ГАРАНТИИ ЗАЩИТЫ ДОСТОИНСТВА ЛИЧНОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

РЕЗЮМЕ

Диссертация посвящена проблемам конституционных гарантий защиты достоинства личности в Республике Армения. Автором особо отмечается важность выявления конституционного статуса достоинства личности как предпосылки эффективного обеспечения защиты достоинства личности. В связи с этим автором оспаривается распространенная идея в соответствии с которой достоинство личности является лишь основой прав и свобод человека, так как такое понимание конституционного статуса достоинства личности исключает прямое действие и обеспечение прямой защиты достоинства личности. Автором широко рассматриваются вопросы, касательно механизмов прямой защиты достоинства личности в рамках законадательства Армении с учетом международной практики и прецедентного права Европейского суда по правам человека. Автором обосновывается, что Конституция Армении в основном закрепляет достоинство личности как основу прав и свобод, что в свою очередь негативно отражается на действующем законадательстве в результате чего не обеспечивается прамая защита достоинства личности.

Автор рассматривает механизмы реализации статьи 17 Конституции Республики Армения как важной конституционной гарантии защиты достоинства личности в свете требований статьи 3 Европейской конвенции по правам человека. Автором обосновывается, что нынешнее законадательство защищает человека только от пыток, что является лишь одной и самой тяжкой формой умаления достоинства личности, в то время как человек лишен возможности защиты достоинства личности, если незаконное вмешательство достоинства не достигает уровня пыток. Автор предлагает несколько решений создавшейся проблемы.

Автором обсуждаются вопросы касательно защиты от оскорбления достоинства личности. В связи с этим автором предлагается расширить круг действий, подподающих под оскорбление, так как в настоящее время в Армении человек защищен только от оскорбительного выражения, в результате чего защита

достоинства личности от оскорбления обеспечивается лишь в соотношении с правом на свободу слова. Автором также обсуждаются последствия ограничения оскорбления в Армении лишь публичной формой и рассматривается данная проблема в свете международных обязательств Армении.

В диссертации рассматриваются также проблемы возмещения морального ущерба: как в виде нематериальной компенсации так и в виде материальной компенсации морального ущерба. Автором данные вопросы обсуждаются в контексте международных обязательств Армении, в свете конституционой аксиологии, также тенденций правовых развитий имевщих место в Республике Армения в последнее время.

Автором рассматриваются также проблемы интерпретации содержания достоинства личности. Автором оспаривается интерпретация достоинства как личная самооценка человека или мнение человека о собственных положительных качествах. Автор выявляет содержание достоинства личности с учетом исторического развития данной категории и посредством тех признаков в силу которых человек отличается от представителей животного мира и в свете механизмов прямой защиты достоинства личности.

Автор обуславливает эффективность конституционной защиты достоинства личности границами содержания данной категории. Автором выявляются негативные последствия восприятия достоинства личности как абсолютной категории и обосновывается, что несмотря на абсолютную ценность достоинста личности, оно не является безграничной в своем содержании. Что касается запрета ограничения достоинства личности, автор считает, что это может относиться лишь к запрету бесчеловечного отношения, пыток а также к запрету отношения к человеку как к средству. А что касается реализации достоинства, и особенно его таких экементов как автономия личности и свобода волеизъявления, то оно всегда ограничено требованиями разума, человеческой природы, морали с учетом фундаментальных законов божественного мироздания. Автор рассматривает также соотношение достоинства личности с другими правами и также отмечает, что достоинство личности является предметом легитимных ограничений.

NELLY ARAKELYAN

THE CONSTITUTIONAL GUARANTEES OF THE PROTECTION OF HUMAN DIGNITY IN THE REPUBLIC OF ARMENIA

SUMMARY

In the dissertation the Author highlightes various issues concerning the protection of human dignity in the light of the respective constitutional guarantees and the obstacles which trigger the inefectivness of protection of human dignity and the absence of a united concept of human dignity in Armenia. The Author presents analysis of both theoretical and practical issues and suggested several solutions to the problems emphasized in the dissertation. The Author discusses the issues of constitutional status of human dignity and concluded that the proper protection of it is possible only if the direct effect of human dignity is ensured. The Author highlights the adverse effects of the perception of human dignity merely as a basis for human rights. The Author emphasizes the role of Constitutional Court of Armenia in direct protection of human dignity and stated that direct protection of human dignity in Armenia is mostly being performed by Constitutional Court.

Author proves that the efectivness of the constitutional guarantess of the protection of human dignity are conditioned, inter alia, by the proper interpretation of the content of human dignity. In this concern the Author concluds that the content of human dignity shall be understood as the possession by a human being of such qualities, as being created by God and by His image, being endowed with reason, freedom of will and consience. The Author argues the interpretation of human dignity as a self-worth, self-respect of a person and states that the constitutional mechanisms for the protection of human dignity can and shall be applied irrespective of self-worth.

The Author conditions the constitutional protection of human dignity by the borders of the content and application of human dignity and discusses the issues of the limitation of human dignity in the light of the perception of human dignity as the absolute and unlimited category. In this regard the Author proves that absolute and unlimited nature of human dignity is only admissible in the context of prohibition of torture, inhumane and degrading treatment, but the same is not true in regard to the correlation of human dignity with authority and freedom of choice as its elements. Here the content of human dignity is limited to the demands of reason, human nature, morality and can be excercised merely with maintenance of the basic principles of

Divine Creation. Human dignity is also a subject to constraints in correlation with other rights.

The author discusses the constitutional guarantees of direct protection of human dignity in Armenia and states that the Constitution in force does not ensure the direct effect of human dignity and limits constitutional status of human dignity mostly to basis for human right and freedoms. In this regard the author highlightes various problems concerning the legislative mechanisms of the protection of human dignity.

The Author discusses the issues of humiliation of human dignity and states that under legislation of Armenia only statement could be considered to be an action insulting the person, whilst this can be considered to be merely one way of degrading of human dignity and can be considered to be just a protection of human dignity within the correlation with the right to freedom of speech. The Author suggests to broad the borders of insult including in its scope other offensive actions. The Author also emphasizes that within the current regulation conerning insult in Armenia human dignity amounts to reputation, as only the public statements are considered to be offensive and in this concern the Author suggests to remove the criterion of publicity.

The Author discusses the issues of compensation of non-pecuniary damage in the Republic of Armenia, and states that the approach according to which Armenian legislation does not include this institute should be removed. The Author proves the existence of moral damage in Armenia, as well as the presence of the compensation of it in both forms pecuniary and non-pecuniary forms. The Author discusses the respective domestic regulations in the light of the international obligations undertaken by the Republic of Armenia. In this concern the Author emphasizes that there are some problems concerning the scope of non-material values the violation of which could lead to compensation of moral damage and states that the respective legislation contradicts the constitutional demands and international obligations. The Author offers solutions for filling these legislative gaps. The Author also states that the new law adopted in this sphere does not ensure the application of Article 3, 5 and 13 of the European Convention of Human Rights, as it directly invokes the Convention, whilst for the application of it domestic legislation shall be introduced to appropriate mechanisms. The Author offers several wordings of Civil and Criminal Code of Armenia for guaranteeing of application of the Convention. The Author presents systemic analysis of the legislation on compensation of moral damage in the light of new legislation and offers solutions for removal of contradictions and composition of definite institute.